

1.2.2. Գյուղատնտեսություն

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2007թ. հունվար-նոյեմբերին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի տվյալներով, կազմել է 577.6 մլրդ. դրամ, որը 2006թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի մակարդակը գերազանցել է 9.6 %-ով (համադրելի գներով):

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը

	2007թ. հունվար-նոյեմբեր, մլն. դրամ	2007թ. հունվար-նոյեմբերը 2006թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2007թ. նոյեմբերը հոկտեմբերի նկատմամբ, %
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	577596.6	109.6	55.1
այդ թվում՝ բուսաբուծություն	405669.0	112.0	x
անասնաբուծություն	171927.6	104.4	x

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, ըստ մարզերի

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2007թ. հունվար-նոյեմբեր	2007թ. հունվար-նոյեմբերը 2006թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2007թ. հունվար-նոյեմբեր	2007թ. հունվար-նոյեմբերը 2006թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2007թ. հունվար-նոյեմբեր	2007թ. հունվար-նոյեմբերը 2006թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
ք.երևան	0.9	180.0	3.3	97.1	29.1	116.9
Արագածոտն	11.3	101.8	72.2	103.0	26.6	121.5
Արարատ	9.3	102.2	46.8	103.1	41.6	121.3
Արմավիր	10.3	109.6	40.4	102.8	77.6	242.5
Գեղարքունիք	16.4	102.5	111.1	103.0	42.8	123.0
Լոռի	10.7	104.9	74.3	103.9	26.7	112.2
Կոտայք	11.8	111.3	64.1	102.7	146.3	82.5
Շիրակ	14.4	102.1	93.4	103.0	39.2	121.4
Սյունիք	8.1	102.5	53.0	103.1	15.1	121.8
Վայոց ձոր	3.6	100.0	23.6	102.6	14.5	148.0
Տավուշ	7.9	102.6	43.2	103.1	21.1	121.3
Ընդամենը ՀՀ	104.7	104.5	625.4	103.0	480.6	114.2

¹ Ներառյալ ներքին սպառումը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2007թ. հուլիս-սեպտեմբերին գյուղատնտեսության ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 201 գյուղական համայնքների 7638 գյուղացիական տնտեսություններում անց է կացրել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն: Հետազոտված տնտեսություններում բերքահավաքի ընթացքում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններից կորուստները մեկ հեկտարից կազմել են 162 կգ, որը կազմել է տվյալ տնտեսություններում ստացված հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության 7.0 %-ը:

Ըստ հետազոտության ամփոփ արդյունքների, հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ընթացքում կորուստները ընդամենը կազմել են մոտ 28.0 հազ. տոննա կամ ընթացիկ տարում արտադրված հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի 6.4%-ը: Արձանագրված կորուստների զգալի մասը, հիմնականում տեղի է ունեցել հացահատիկահավաք կոմբայնների ֆիզիկական մաշվածության պատճառով: